ՏՐԱՆՍ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոկտեմբեր Նոյեմբեր 2021

Հ - 22

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՇԱՐՔ ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ----------2
«ՀԱՄԱՅՆՔ և ԱԿՏԻՎԻԶՄ» ԹԵՄԱՅՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ----------4
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ՝
«ՀԱՄԱՅՆՔ և ԱԿՏԻՎԻԶՄ» ԹԵՄԱՅՈՎ----------6
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԻՆՁԱՆԻՑ----------8
«COVID-19-Ի ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ----------9
ԻՐԱԿԱՆԱՑՎԵՑ «ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԸ»
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ ԼԳԲՏԻՔ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ----------10

Սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների միջոցառումների ամփոփագիր

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն Տրանս ապահով տարածքում սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում իրականացրել է թվով 19 միջոցառում.



«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ տրանս համայնքային կենտրոնում սեպտեմբեր և հոկտեմբեր ամսվա ընթացքում այցելել են թվով

433

Տրանս ԼԳԲԹՔ+ անձ

«Տրանս Ամերիկա» կինոդիտում-համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 22 Տրանս և ԼԳԲԹՔ սեքս աշխատող անձ:

«Ֆեմ զրույց» համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 15 Տրանս ԼԳԲԹՔ անձ:

«Իրավաբանական խորհրդատվություն» համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 22 Տրանս և ԼԳԲԹՔ անձ:

«Մեր երազանքների Հայաստանը» համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 17 Տրանս և ԼԳԲԹՔ անձ:

«Սեքս աշխատողների հպարտության օրը» համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 19 սեքս աշխատող անձ:

«Պիկնիկ-քննարկում» համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 26 Տրանս և ԼԳԲԹՔ անձ:

«Բուլլինգ» համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 19 Տրանս ԼԳԲԹՔ անձ:

«Հոգեբանական ֆոկուս խումբ» համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 17 Տրանս և ԼԳԲԹՔ անձ:

«Հանդիպում Մաշառուի հետ» միջոցառմանը մասնակցել է թվով 41 Տրանս և ԼԳԲԹՔ անձ և համախոհներ:

«Ընտանեկան բռնություն» համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 28 Տրանս և ԼԳԲԹՔ անձ:

«Գեղեցկուհին» կինոդիտմանը մասնակցել է թվով 14 Տրանս և ԼԳԲԹՔ և սեքս աշխատող անձ:

«Մեր վախերը» համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 10 Տրանս և ԼԳԲԻՔ անձ:

«Տրանս և ԼԳԲԻՔ համայնքի ակտիվիստների հանդիպում» համայնքային միջոցառմանը մասնակցել է 10 Տրանս և ԼԳԲԻՔ անձ:

«Ինձպես ճիշտ արձագանքել տրանսֆոբ և հոմոֆոբ անձանց» համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 18 Տրանս և ԼԳԲԻՔ անձ:

«Տրանս ԼԳԲԻՔ անձանց անվտանգությունը» համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 15 Տրանս ԼԳԲԻՔ անձ:

«Կուկան խոհանոցում» համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 28 Տրանս և ԼԳԲԻՔ անձ:

«Հանդիպում կամավորների հետ» հանդիպմանը մասնակցել է թվով 10 կամավոր:

«Քարոզարշավներ վարելու հմտություններ» հանդիպմանը մասնակցել է թվով 15 Տրանս ԼԳԲԻՔ անձ:

«Մեր իրավունքները ոստիկանությունում» հանդիպմանը մասնակցել է թվով 17 Տրանս ԼԳԲԻՔ անձ:

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում ընդունել է թվով 433 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձ, որոնք օգտվել են կազմակերպության կողմից իրականացվող իրավաբանական, կրթական և տեղեկատվական, սոցիալական ծրագրերի շրջանակներում տրամադրվող ծառայություններից:

Մեր ամսական ամփոփագրերին կարող եք ծանոթանալ մեր պաշտոնական կայքէջում և սոցիալական մեդիայում:

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թվականի նոյեմբերի 3-ին Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համաֆինանսավորմամբ իրականացվող՝ «Արդարադատության մատչելիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում՝ խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելություն սերմանող խոսքի զոհերի համար արտադատական փոխհատուցման մեխանիզմների միջոցով» ծրագրի շրջանակներում կազմակերպված միջազգային սեմինարի ընթացքում ելույթ ունեցավ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ հիմնադիր նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը:

Լ.Մարտիրոսյանն իր ելույթում մասնավորապես անդրադարձավ Հայաստանում Տրանս ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ատելության խոսքին և գենդերային հիմքով հանցագործություններին, ընդգծեց, որ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, որպես ատելության հիմքով հանցագործությունների կանխարգելման ոլորտում առաջամարտիկ, կարևորում է այդ գործում միջազգային հանրության դերը և համատեղ ջանքերի անհրաժեշտությունը:



SERIES OF MEETINGS HELD FOR TRANS LGBIQ PEOPLE

On 20th October of this year, a meeting-discussion took place in the “Right Side” NGO’s safe and secure space for the Trans LGBIQ people who had arrived from Yerevan and several regions of the country. The theme of the event was mental health and it was hosted by the president of the NGO – Lilit Martirosyan.

Various psychological tests and games were conducted by L. Martirosyan. The participants shared their personal stories, talking about the psychological problems they were facing because of their gender identity. Afterwards, some of the participants presented cases of domestic violence, stigma and discrimination by society.

A mutual help group was set up among the Trans LGBIQ community members present to assist those in need.

At the end of the meeting, a small survey was conducted among the community representatives on the availability of psychological services, during which participants reported that services were not available and they needed psychological support.

On 26th October of this year, a meeting-discussion on the safety of LGBT people was held in the “Right Side” HRD NGO’s safe and secure space, which was hosted by a transgender woman, model, make-up artist Monica Sarkisian, who had participanted in the NGO projects before.

Monica spoke about the security of the Trans LGBIQ community, presented several personal cases during which she had been abused, and based on those cases, presented some details for ensuring security which she had acquired through active participation in the NGO projects.

The participants thanked Monica Sarkisian for organizing such an educational meeting, since security was vitally important for the Trans LGBIQ community in that situation.

On 29th October of this year, a meeting on the “Skills for Running Campaign” was held in the “Right Side” NGO’s safe and secure The meeting also included an Armenian cuisine event hosted by Kuka Kasyan. Fifteen representatives of the Trans LGBIQ community arriving from the capital city as well as from different regions of the country were present at the event.

During the meeting, the participants had a discussion, during which they gained important knowledge on how to run campaigns.

Afterwards, the guest of the meeting, transgender activist Kuka Kasyan, having intimate conversations with the participants, prepared a number of traditional Armenian dishes. During the tasting of the dishes, the participants talked about the needs of the community, successes achieved, challenges and future steps.

The meetings were possible with the financial support of the Astraea Lesbian Foundation for Justice.:

ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Սույն թվականի հոկտեմբերի 12-ին «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի ապահով տարածքում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում և կինոդիտում սեքս աշխատող համայնքի թվով 12 ներկայացուցչի հետ:

Հանդիպման սկզբում սեքս աշխատող համայնքի ներկայացուցիչները կիսվեցին իրենց խնդիրներով՝ բարձրաձայնելով իրենց հետ պատահած բռնության, խտրականության և մի շարք այլ դեպքերի մասին, այնուհետև ներկա գտնվողները դիտեցին «Գեղեցկուհի» ֆիլմը, որի գլխավոր հերոսուհին՝ Վիվիանը, սեքս աշխատող համայնքի ներկայացուցիչ է, ֆիլմում մանրամասն ներկայացված է սեքս աշխատող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը, ծաղրանքները, բռնությունը հասարակության կողմից:

Սույն հանդիպումների շարքը կրում է շարունակական բնույթ՝ համախմբելով սեքս աշխատող անձանց, կրթելով և զարգացնելով նրանց կարողությունները:

Սույն թվականի հոկտեմբերի 15-ին «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի ապահով տարածքում իրականացավ հանդիպում-քննարկում Տրանս ԼԳԲԻՔ և սեքս աշխատող համայնքի ներկայացուցիչների և ակտիվիստների համար:

Համայնքի ակտիվիստները կիսվեցին իրենց գործունեությամբ, ներկայացրին իրենց կատարած աշխատանքները, կիսվեցին իրենց անձնական փորձով: Ակտիվիստներից մեկը նշեց, որ սկսել է զբաղվել ակտիվիզմով «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի կազմակերպած դասընթացների շնորհիվ և հիմա որպես ակտիվիստ կարողանում է բաց դեմքով ներկայանալ և ներկայացնել տարբեր հարթակներում ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ անձանց խնդիրները:

Հաջորդ ակտիվիստը կիսվեց իր ակտիվիստական գործունեությամբ, պատմեց, թե ինչպես է փոխել ընտանիքի վերաբերմունքը իր և և սեքս աշխատող անձանց վերաբերյալ՝ նվազեցնելով խարանը և խտրականությունը:

Ակտիվիստներից մեկը պատմեց, որ բազում կարծրատիպեր է կոտրում այն ԲՈՒՀ-ում, որտեղ սովորում է, ավելացրեց, որ ակտիվիստ լինելով՝ պետք է կրթական վայրերում ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ անձանց վերաբերյալ մտածելակերպը փոխի:

Հանդիպման ավարտին մասնակիցները շնորհակալություն հայտնեցին «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի թիմին՝ նմանատիպ հանդիպում կազմակերպելու համար, առաջարկեցին կազմակերպել տարատեսակ արշավներ, որոնք կբարձրացնեն ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ և սեքս աշխատող անձանց տեսանելիությունը ոչ միայն Երևանում, այլև ՀՀ տարբեր մարզերում:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ ապահով տարածքում սույն թվականի հոկտեմբերի 18-ին Տրանս ԼԳԲԻՔ և սեքս աշխատող համայնքի տասը ներկայացուցիչների հետ իրականացավ հանդիպում՝ «մեր վախերը» թեմայով:

Հանդիպման ընթացքում մասնակիցները բարձրաձայնեցին իրենց վախերի մասին՝ փորձելով գտնել դրանց լուծումները: Մասնակիցներից մեկը, որը Տրանս սեքս աշխատող համայնքի ներկայացուցիչ է, ասաց, որ մի քանի ամիս առաջ դրսում իր վրա հարձակվել են մի քանի երիտասարդ տղամարդիկ և բռնություն կիրառել, որից հետո մասնակիցը վախով է դուրս գալիս տանից սեքս աշխատանք իրականացնելու նպատակով և արդեն մի քանի ամիս է, ինչ չի կարողանում հաղթահարել այդ վախը:

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն հոգեբանական աջակցություն առաջարկեց կարիք ունեցող մասնակիցներին և հայտնեց, որ նմանատիպ հանդիպումները շարունակական բնույթ են կրելու՝ օգնելու ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ և սեքս աշխատող անձանց գտնելու ներդաշնակություն և անդորր:

Հանդիպումները հնարավոր են դարձել «Կարմիր հովանոց» ֆոնդի ֆինանսական աջակցությամբ:

Տրանս անձանց հիշատակի շաբաթ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը՝ Տրանս անձանց հիշատակի օրվան ընդառաջ, նոյեմբերի 17-ից սկսած շաբաթը հայտարարում է որպես Տրանս անձանց հիշատակի շաբաթ:

Միասին կշարունակենք պայքարել, մինչև բոլորս ապահով լինենք:

Նոյեմբերի 16 - 19 *– Կարճամետրաժ սոցիալական հոլովակների հրապարակման միջոցով սոցիալական մեդիա արշավներ.*
#TransArmenia #TdoR2021 #RightSideNGO

Նոյեմբերի 18 *– Մոմավառություն Երևանում՝ ի հիշատակ տրանսֆոբիայի զոհ դարձած տրանսգենդեր անձանց:*

Նոյեմբերի 19 *– մոմավառության լուսանկարների հրապարակում.*
#TransArmenia #TdoR2021 #RightSideNGO

Նոյեմբերի 24 *– տրանս անձանց իրավիճակը Հայաստանում. հարցազրույց փաստաբան Արթուր Մարգարյանի հետ:*

TDoR 2021

Բարձրացրու՛ ձեռքդ հանուն հավասարության, վե՛ր ջրիր բռնության դեմ

Ես տրանս անձ եմ, և ես հպարտ եմ դրանով: Ես ծնվել եմ այնպիսին, ինչպիսին կամ: Հարգեք մեր ինքնությունը և վերջ տվեք ատելությանը մեր հանդեպ, քանի որ ես՝ իմ տրանս քույրերն ու եղբայրները, նույնպես ցանկանում ենք ապրել հասարակության բոլոր անդամների նման: Ես սգում եմ բոլոր տրանսֆոբիայի զոհ դարձած, ատելության զոհ դարձած տրանս մարդկանց հիշատակը:

Ես Մոնիկա Սարգսյանն եմ, տրանսգենդեր կին և ակտիվիստ: Սգում եմ բոլոր տրանսֆոբիայի զոհ դարձած անձանց հիշատակը:
Կոչ եմ անում վերջ տալ տրանսֆոբիային:
Բոլոր տրանս մարդիկ ունեն ազատ ապրելու հավասար իրավունքներ՝ առանց խտրականության կամ բռնության՝ անկախ իրենց գենդերային ինքնությունից:

Ես Կուկա Կասյանն եմ՝ այն տրանս մարդկանցից, ով ամեն քայլափոխի բախվում է խարանի ու խտրականության, բռնության ու հալածանքի:
Նրանք, ովքեր բռնության կողմնակից չեն, պայքարեք տրանս մարդկանց իրավունքների պաշտպանության համար:
Այսօր տրանսֆոբիայի զոհ են դարձել իմ տրանսգենդեր ընկերները ամբողջ աշխարհում:

Ես Անին եմ, Տրանս ԼԳԲԻՔ ակտիվիստ: Այսօր ես սգում եմ, ամբողջ աշխարհում, տրանսֆոբիայի զոհ դարձած տրանս անձանց հիշատակը:
Դադարեցրեք տրանս անձանց նկատմամբ խտրականությունը, ատելությունը, բռնությունը:
Հարգեք յուրաքանչյուր մարդու ինքնությունը:

TGEU Transgender Europe
RIGHT SIDE
For the Trans Day of Remembrance, in cooperation with Heinrich Böll Foundation e.V.
HEINRICH BÖLL STIFTUNG
www.tdor.tgeu.org

Ես Վահե Բաբայանն եմ, Տրանս ԼԳԲԻՔ ակտիվիստ:
Ցավով եմ խոսում այն մասին, որ 21-րդ դարում ամբողջ աշխարհում տեղի են ունենում գենդերային հիմքով սպանություններ:
Վերջ տրանս անձանց նկատմամբ խտրականությանը:
Ես պայքարելու եմ այնքան ժամանակ, մինչև բոլորս ապահով լինենք:

Ես Աշոտ Գորգյանն եմ՝ «Ձայն» երիտասարդական մեդիա նախաձեռնության հիմնադիրն ու խմբագիրը:
Ցավոք, Հայաստանը դեռևս անապահով երկիր չէ տրանս մարդկանց համար: Տրանս մարդիկ ամեն օր ենթարկվում են գենդերային ինքնությամբ պայմանավորված բռնության:
Այսօր ես հարգում եմ բոլոր տրանսֆոբիայի զոհ դարձած տրանսգենդեր անձանց հիշատակը

2020 թվականի տվյալներով՝ տրանսֆոբիայի հետևանքով աշխարհում 350 տրանս մարդ է սպանվել: Նրանցից շատերը սպանվել են առօրյա կյանքում՝ դրսում զբոսնելիս, գնումներ կատարելիս, նույնիսկ տանը՝ իրենց գենդերային ինքնությամբ պայմանավորված:
Դադարեցրեք բռնությունը տրանս մարդկանց նկատմամբ:Տրանս մարդիկ հավասար իրավունքներ ունեն, ինչպես բոլորը:

Ես ԼԳԲՏԻՔ ակտիվիստ եմ, ես սգում եմ այն բոլոր տրանս անձանց հիշատակը ովքեր զոհ են դարձել տրանսֆոբիային և կոչ եմ անում բոլորին վերջ տալ տրանս անձանց նկատմամբ բռնությունը:
Քանի որ նրանցից մեկը կարող է լինել ձեր ընկերը, բարեկամը կամ հարևանը:

Նոյեմբերի 20-ը բռնությանը զոհ դարձաց տրանսգենդեր անձանց միջազգային օրն է և մենք որպես տրանսգենդեր անձանց համայնքային կազմակերպություն հարգում և հիշում ենք այն տրանսգենդեր անձանց հիշատակը ովքեր դարձել են ծաղրանքի, խտրակության և բռնության զոհ իրենց գենդերային ինքնության և ինքնաարտահայտման հիմքով 2020/2021թ: մենք հավաքագրել ենք տրանսգենդեր անձանց նկատմամբ կատարված ատելության հիմքով հանցագործությունների 380 դեպք, չնայած ԻԿԻՀԿ-ի ներկայացված դեպքերի թվին, ցավոք սրտի, մենք համոզված ենք որ Հայաստանում տրանսգենդեր անձանց իրավիճակը անհանգստացնող է, տրանսգենդեր անձիք ենթարկվում են բռնության, խտրականության և ծաղրանքի հանրային կյանքի բոլոր բնագավառներում:

TGEU Transgender Europe
RIGHT SIDE
For the Trans Day of Remembrance, in cooperation with Heinrich Böll Foundation e.V.
HEINRICH BÖLL STIFTUNG
www.tdor.tgeu.org

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՀԿ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ՝ 30.11.2021 Թ-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՄԻԵԴ վարույթ	Լիլիթ Մարտիրոսյանն ընդդեմ ՀՀ, Կոնվենցիայի 3,6,8,13 հոդվածների խախտումների ճանաչում:
Քաղաքացիական գործեր	1.Ա.Ք.-ն ընդդեմ Ա.Կ.-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին: 2.Ա.Ա.-ն ընդդեմ «Իսկանդեր» ՍՊԸ-ի՝ աշխատանքային հարաբերությունները ծագած ճանաչելու և աշխատավարձի գումարը բռնագանձելու պահանջների մասին: 3.Ա.Ք.-ն ընդեմ Ա.Կ.-ի՝ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջի մասին:
Քրեական գործեր՝ դատական փուլում	1.Գ.Թ.-ն ենթարկվել է ծեծի, նրան պատճառվել է նյութական և բարոյական վնաս, հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 118 և 185 հոդվածներով, Գ.Թ.-ն ճանաչվել է տուժող և գործը գտնվում է դատաքննության փուլում: 2.Մ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածով, գործը գտնվում է դատաքննության փուլում: 3.Գ.Թ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 243.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանք կատարելու համար, այն է՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելը:
Քրեական գործեր՝ նախնական քննության փուլում	1.ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածով հարուցված քրեական գործով սեքս աշխատող Ա.-ն ճանաչվել է տուժող: 2.ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածով հարուցված քրեական գործի շրջանակում տեղի են ունեցել հանցագործության նոր դեպքեր, արդյունքում փաստաբանի կողմից ներկայացված բողոքների արդյունքում հարուցվել են ևս երկու քրեական գործեր ՀՀ քրեական օրենսգրքի 340 և 110 հոդվածներով: Է.Խ.-ն ճանաչվել է տուժող: 3.ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված, Մ.Կ.-ն ներգրավվել է որպես մեղադրյալ: 4.ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդված, Դ.-ն ճանաչվել է տուժող: 5.ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդված, Մ.-ին առաջադրվել է մեղադրանք: 6.ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մաս, տուժող Ա.Ք.
Քրեական գործեր՝ մինչդատական վարույթի փուլում	1.Ա.Ք.-ն դիմել է ոստիկանություն ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածով քրեական գործ հարուցելու համար նոր երևան եկած հանգամանքի ուժով: Մի շարք բողոքարկումներից հետո փաստաբանի ջանքերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը բավարարել է փաստաբանի բողոքը և գործն ուղարկել նոր քննության: 2.Ա.Ք.-ն դիմել է ոստիկանություն ընդդեմ իր նախկին փաստաբանի՝ նրա կողմից ենթադրյալ խարդախություն կատարելու կասկածանքով: Ոստիկանությունը և դատարանը մերժել են բողոքները և այժմ գործը գտնվում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում: 3.Գործը վերաբերում է Նարեկ Մալյանի կողմից Կուբայի քաղաքացիների վերաբերյալ անձնական բնույթի բժշկական տվյալներ հրապարակելու մասին, առ այն, որ Ն. Մալյանը իր ֆեյսբուքյան էջում գրել էր, որ Հայաստան են ժամանել Կուբայի քաղաքացիներ, ովքեր հիվանդ են ՁԻԱՀ-ով և խնդրել են Հայաստանում փախստականի կարգավիճակ: «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի կողմից ներկայացվել էր հաղորդում հանցագործության մասին՝ Նարեկ Մալյանի կողմից անձնական տվյալներ հրապարեկելու վերաբերյալ, սակայն ոստիկանությունը մերժել էր քրեական գործի հարուցումը, որն էլ բողոքարկվել է դատարան:
Վարչական գործեր	Կ.Ա.-ն ընդդեմ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ, համապատասխան վարչական ակտ, այն է՝ Հայցվոր Կ. Ա .-ի ծննդյան թիվ 870 ակտում սեռի վերաբերյալ գրառումը փոխել, իգականը ուղղել արական գրառումով, ընդունելուն պարտավորեցնելու և պատասխանողի 17.12.2018թ. եզրակացությունը վերացնելու պահանջի մասին գործով: Գործը գտնվում է վճռաբեկ դատարանում:

Հարգելի՛ Տրանս ԼԳԲԻՔ համայնք, մեր իրավաբանական ծառայություններից օգտվելու համար կարող եք զանգահարել +37411880770հեռախոսահամարով:

«ԼԳԲՏԻՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՈՒԺԸ» ՀԱՆՐԱՅԻՆ ԱՐՇԱՎՆԵՐ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն՝ Տեղական նախաձեռնությունների կանադական հիմնադրամի (CFLI) ֆինանսական աջակցությամբ, սույն թվականի հոկտեմբեր ամսին կազմակերպել էր ուսուցողական հանրային արշավներ ՀՀ տարբեր մարզերում բնակվող Տրանս ԼԳԲԻՔ համայնքի ներկայացուցիչների համար: Հանրային արշավներն անցկացվեցին «Փոփոխության ձայնը» երիտասարդական ակադեմիայի մասնակիցների կողմից, որոնք իրենց ստացած գիտելիքներով և հմտություններով կիսվեցին իրենց հասակակիցների հետ՝ խթանելով նրանց՝ երիտասարդական աշխատանքների և քաղաքացիական ակտիվիզմի մեջ ներգրավվածության մակարդակի բարձրացումը:

Ակտիվիստները մենթորների օգնությամբ նախօրոք քարտեզագրել էին քննարկվելիք թեմաները, մասնակիցներին և անցկացման վայրը, որպեսզի հանդիպումների շարքն անվտանգ և առավել արդյունավետ անցնի բոլորի համար:

Հոկտեմբեր ամսվա առաջին հանդիպումն իրականացավ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում՝ համախմբելով տասնութ ԼԳԲՏԻՔ անձանց: Հանդիպման ընթացքում մասնակիցները տեղեկացան մրցունակ ծրագրերին և կրթաթոշակներին դիմելու և հաջողության հասնելու եղանակների մասին: Մասնակիցները կարևորեցին հանդիպումը, քանի որ ծանոթ չէին միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող կրթական հնարավորություններին, որոնց շնորհիվ ՀՀ-ում բնակվող երիտասարդները կարող են սովորել և գործունեություն ծավալել ՀՀ սահմաններից դուրս: Մասնակիցները խմբային աշխատանքի արդյունքում մշակեցին նոր ծրագիր, որը վերաբերում է ԼԳԲՏԻՔ անձանց կրթությանը և նշեցին, որ զարգացնելով գաղափարը՝ նրանք հետագայում կփորձեն ֆինանսավորում ստանալ: Մասնակիցները շնորհակալություն հայտնեցին հանդիպման համար և կարևորեցին դրա շարունակական լինելը, քանի որ ցանկություն ունեն իրենց նպատակներն ի կատար ածել:

Շարունակելով հանդիպումների շարքը՝ հաջորդ հանդիպումն անցկացվեց Կոտայքի մարզում, որին մասնակցում էին 21 ԼԳԲՏԻՔ անձինք. հանդիպման թեման էր «ԼԳԲՏԻՔ անձանց իրավիճակը ՀՀ մարզերում. մեր հետագա քայլերը»: Հանդիպան ընթացքում բարձրացվեցին մի շարք հարցեր, որոնց ԼԳԲՏԻՔ անձինք բախվում են գյուղական համայնքներում, նրանք ընդգծեցին, որ փորձում են ամեն կերպ թաքցնել իրենց ինքնությունը, լուռ դիմանում են նվաստացումներին և ճնշումներին, որպեսզի չենթարկվեն ֆիզիկական բռնության, չկորցնեն իրենց հարազատ-բարեկամների սերն ու հարգանքը: Մասնակիցներից շատերը, կիսվելով իրենց անձնական պատմություններով, ավելացրին, որ ցանկանում են իրենց համայնքում փոփոխություններ կատարել, որ իրենց շրջապատի մարդիկ ընդունեն իրենց ինքնությունը և չխտրականացնեն ԼԳԲՏԻՔ անձանց, սակայն վախենում են, որ իրենց չեն ընդունի կամ ճիշտ չեն ընկալի: Քննարկմանը հաջորդեց մտքերի փոխանակումն ու հետագա քայլերի մշակումը: Հնադիպման ավարտին մասնակիցներից մեկը նշեց. «այս ձևաչափով քննարկումները մեզ ավելի են մոտիվացնում, ես ինձ ուժեղ եմ զգում, երբ այսքան շատ մարդ եմ տեսնում իմ կողքին, մեզ համար հաճախակի կազմակերպեք նման միջոցառումներ»: Հանդիպումը ոգևորիչ էր և կրթական:

Activity supported by the
Canada Fund for Local Initiatives
Activité réalisée avec l'appui du
Fonds canadien d'initiatives locales
Canada

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



Գեղարքունիքի մարզում բնակվող երկու ակտիվիստներ պատրաստակամություն էին հայտնել հաջորդ արշավը կազմակերպել Սևան քաղաքում, որի ընթացքում նրանց հաջողվել էր համախմբել ԼԳԲՏԻՔ համայնքի քսանվեց անդամների և համակիրների: Հանդիպման ընթացքում մասնակիցները խոսեցին անվտանգությունից և ինքնապաշտպանությունից: Մարզերում բնակվող ԼԳԲՏԻՔ անձանց համար անվտանգությունը հույժ կարևոր հարց է: Անհրաժեշտ է լինել ավելի տեղեկացված, միասին պայքարել մեր իրավունքների խթանման համար, պաշտպանել ինչպես մեզ, այնպես էլ այլոց: Հանդիպումը կարևոր էր բոլորի համար, քանի որ համայնքի յուրաքանչյուր անդամ և համայնքին պաշտպանող յուրաքանչյուր անհատ բախվում է ֆիզիկական և հոգեբանական անվտանգության խնդրին:

Ամփոփելով հանդիպումների շարքը՝ վերջին միջոցառումը կազմակերպվել էր Գյումրի քաղաքում, որին մասնակցում էին 17 ԼԳԲՏԻՔ անձինք: Հանդիպումը ԼԳԲՏԻՔ անձանց ընտանիքներում ընտանեկան բռնության կանխարգելման եղանակների վերաբերյալ էր: ԼԳԲՏԻՔ անձինք խոսեցին իրենց անձնական կյանքից՝ ներկայացնելով, թե ինչպես են խտրականության ենթարկվելով շարունակում ապրել իրենց ընտանիքներում: Ակտիվիստների հետ հանդիպմանը ներկա էին նաև ԼԳԲՏԻՔ անձանց ծնողներից երկուսը, որոնք ընդունել էին իրենց երեխաներին այնպիսին, ինչպիսին նրանք կան: Ծնողները խոսեցին ծնող-երեխա փոխարաբերություններից, կիսվեցին ծնողների հետ հաղորդակցվելու հատուկ հմտություններով, ընդգծեցին, որ միշտ կանգնած են բռնության ենթարկված յուրաքանչյուր անհատի կողքին: Հանդիպումը հուզիչ էր, սակայն շատ կարևոր բոլորի համար:

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ն ԲԱՐՁՐ Է ԳՆԱՀԱՏՈՒՄ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԿԱՉ» ՄՐՑԱՆԱԿԻ ԸՆՁԵՌԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2020 թվականի դեկտեմբերի 10-ին «Մարդու իրավունքների կակաչ 2020» մրցանակը շնորհվեց «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի հիմնադիր և նախագահ Լիլիթ Մարտիրոսյանին: Նիդերլանդների Թագավորության արտաքին գործերի նախարար Ստեֆ Բլոկը մրցանակը հանձնեց կառավարության կողմից կազմակերպված առցանց արարողության ժամանակ: Միևնույն ժամանակ, Երևանում Նիդերլանդների դեսպանությունը կազմակերպել էր միջոցառում՝ Մարդու իրավունքների պաշտպանության օրը նշելու և Լիլիթին շնորհավորելու կապակցությամբ, որի ընթացքում ԱԳ նախարարի անունից Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Նիկո Շերմերսը մրցանակը հանձնեց Լիլիթին:

Լիլիթ Մարտիրոսյանը՝ ՀԿ աշխատակազմի, խորհրդի անդամների և ԼԳԲՏԻՔ համայնքի ներկայացուցիչների հետ քննարկման արդյունքում, ցանկություն հայտնեց մրցանակը տրամադրել տրանս ԼԳԲԻՔ համայնքային ապահով տարածքի ստեղծմանը, որտեղ համայնքի անդամները հնարավորություն կունենան մոբիլիզացվելու, կրթություն ստանալու, որտեղ իրենց կզգան ապահով ու ներդաշնակ: Լ. Մարտիրոսյանի խոսքերով. «Երբ դու ակտիվիստ ես, պետք է կյանքդ ներդնես քո գործի մեջ՝ փոխելու ուրիշների կյանքը դեպի լավը, պետք է ապրեցնես՝ հույս տալով դիմակայելու աշխարհի ցանկացած մարտահրավերների: Յուրաքանչյուր անհատի համար պետք է ստեղծվեն բոլոր նախադրյալները, որպեսզի նա իրեն երջանիկ և պաշտպանված զգա»:

Մեր աշխատանքների ծավալը տարեցտարի ավելացնելով՝ ջանք ու եռանդ չենք խնայում, որպեսզի աջակցենք տրանս ԼԳԲԻՔ անձանց իրավունքների լիարժեք կիրարկմանը, ապահովենք նրանց բարեկեցիկ ապագան, խթանենք ներառական մթնոլորտը, ՀՀ-ն դարձնենք ժողովրդավար և մարդու իրավունքները պաշտպանող երկիր:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում Նիդերլանդների կառավարությանը վստահության և ԼԳԲՏԻՔ անձանց իրավունքների պաշտպանության և անվտանգության ապահովման հարցում շարունակական աջակցություն ցուցաբերելու համար, ինչպես նաև բարձր է գնահատում Հայաստանում Նիդերլանդների դեսպանատան գործունեությունը և մեր համագործակցությունը դեսպանատան անձնակազմի հետ:

Տրանս ԼԳԲԻՔ անձանց համար նախատեսված ապահով տարածքի պաշտոնական բացումը կկայանա 2022 թվականին:

Ողջ աշխարհում դեկտեմբերի 10-ը նշվում է՝ որպես Մարդու իրավունքների միջազգային օր: Այս օրվա կապակցությամբ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը՝ Տեղական նախաձեռնությունների կանադական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ պատրաստել է տեսանյութ, որի նպատակն է բարձրաձայնել ԼԳԲՏԻՔ անձանց խնդիրների մասին և նվազեցնել նրանց նկատմամբ խտրական վերաբերմունքը Հայաստանի Հանրապետությունում:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ

Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ն Արագ արձագանքման ֆոնդի ֆինանսական աջակցությամբ առաջին անգամ իրականացնում է բնապահպանական ծրագիր, որի նպատակն է բարձրացնել ՀՀ-ում բնակվող ԼԲՏԻՔ երիտասարդների իրազեկվածության մակարդակը բնապահպանական խնդիրների, կլիմայի փոփոխության տարատեսակ ազդեցությունների, գենդերային դերերի և գենդերային արդարության խթանման գործում նրանց ակտիվ մասնակցության անհրաժեշտության վերաբերյալ:

Կլիմայի փոփոխությունը մեծացնում է գենդերային անհավասարությունը և բացասական ազդեցություն է ունենում ԼԲՏԻՔ համայնքի ներկայացուցիչների սոցիալական և քաղաքական իրավունքների վրա, շատ դեպքերում համայնքի անդամներն ավելի խոցելի են կլիմայի փոփոխության բացասական ազդեցության հանդեպ, քանի որ հավասարապես ներկայացված չեն և ներգրավված չեն կլիմայի և գենդերային արդարության վերաբերյալ քննարկումների և որոշումների կայացման գործընթացներում:

Սույն ծրագրի միջոցով նպաստելու ենք ԼԲՏԻՔ անձանց՝ կլիմայական ակտիվիզմի մեջ ներգրավվածության մակարդակի բարձրացմանը, համայնքի անդամները՝ ՀԿ անձնակազմի աջակցությամբ, ներառվելու են կլիմայի փոփոխության դեմ պայքարի գործում՝ ձեռք բերելով գիտելիքներ իրենց իրավունքների վերաբերյալ և դրանք օգտագործելով գենդերային արդարադատության խթանման համար:

Ծրագրի ընթացքում նախատեսված է իրականացնել 5-օրյա ճամբար 20 ԼԲՏԻՔ երիտասարդների համար, որոնք հետագայում ՀՀ բոլոր մարզերում կազմակերպելու են էկո-արշավներ՝ ներառելով առնվազն մարզաբնակ 200 հասակակցի: Բացի այդ, ՀՀ 4 մարզերում իրականացվելու է ծառատունկ, տեղադրվելու են էկո աղբամաններ՝ աղբի տեսակավորման ավանդույթ ձևավորելու համար, 5 զբոսաշրջային տարածք մաքրվելու է աղբից: Այդ ամենի հետ մեկտեղ ներառականության վերաբերյալ սոցիալական տեսահոլովակ է նկարահանվելու և ԼԲՏԻՔ անձանց կողմից շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ ձեռնարկ է մշակվելու, որը կխթանի համայնքի կլիմայական ակտիվիզմը գյուղական համայնքներում:

ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ դատական դիմումի հիման վրա

Կ.Ա.-ն 30.10.2018թ.-ին ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժին դիմում է ներկայացրել ծննդյան ակտում ուղղումներ կատարելու վերաբերյալ:

Կ. Ա.-ն ներկայացված դիմումով խնդրել է ուղղում կատարել ծննդյան թիվ 870 ակտում, այն է՝ սեռի վերաբերյալ սյունակում իգական նշումը ուղղել արական նշումով:

ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի կողմից 17.12.2018թ. կազմված եզրակացությամբ դիմումը մերժվել է:

Տվյալ դեպքում, ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժինը, մերժելով Կ.Ա.-ի դիմումը, հղում է կատարել ՀՀ արդարադատության նախարարի 14.05.2007թ. հրամանին, որը սահմանում է, որ ՔԿԱԳ մարմինը մերժում է քաղաքացիական կացության ակտի գրանցման մեջ փոփոխությունների, լրացումների և ուղղումների կատարումը, եթե ներկայացված փաստաթղթերը լիարժեք չեն, չեն բխում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներից կամ փոփոխություններ, լրացումներ և ուղղումներ կատարելու պահանջը հիմնավորված չէ, փաստաթղթերում առկա են տեղեկությունների անհամապատասխանություններ:

Կ.Ա.-ն դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել ՀՀ ԱՆ ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի կողմից ընդունված վարչական ակտը և պարտավորեցնել ընդունել բարենպաստ վարչական ակտ:

ՀՀ վարչական դատարանի կողմից Կ.Ա.-ի հայցը մերժվել է, որից հետո Կ.Ա.-ն դիմել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարան:

Այսինքն, եթե անձը ցանկանում է փոփոխություն կատարել քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ (սեռի մասին գրառման փոփոխություն), նա պետք է՝

Իրականացնի սեռափոխություն:
Ներկայացնի ՀՀ օրենսդրության սահմանված կարգով բժշկական կազմակերպության կողմից տրված սեռի փոփոխության մասին փաստաթուղթ:
Քննարկվող դեպքում, որպեսզի Կ.Ա.-ն կարողանար սեռի վերաբերյալ սյունակում իգականը ուղղեր արական նշումով, նա պետք է իրականացներ թվարկված գործողությունները, այն է՝ իրականացնել սեռափոխություն և ներկայացներ ՀՀ օրենսդրության սահմանված կարգով բժշկական կազմակերպության կողմից տրված սեռի փոփոխության մասին փաստաթուղթ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Գարսոնը և Նիկոտը ընդդեմ Ֆրանսիայի (ECHR 121 (2017) 06.04.2017) գործով կայացրած վճռով[i] անդրադարձ է կատարել նշված հիմնախնդիրներին, մասնավորապես, նշելով, որ տրանսգենդեր անձի գենդերային ինքնության ճանաչումը բժշկական միջամտությունների ենթարկվելուց հետո, որը նրանք չեն ցանկացել իրականացնել, նշանակում է անձնական կյանքի հարգելու իրավունքի լիակատար ապահովման մերժում:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ Հայաստանում նաև բացակայում են իրավական կարգավորումները, ըստ որոնց կահմանվեր սեռափոխության մասին բժշկական կազմակերպության կողմից տեղեկանք տրամադրելու նորմերը և կարգավորումները:

2021թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը մերժել է Կ.Ա.-ի վերաքննիչ բողոքը և 2021թ. նոյեմբերի 4-ին ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշումը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան:

[i] https://hudoc.echr.coe.int/spa#{%22itemid%22:[%22001-172913%22]}

ԻՍԵՌԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

16.05.2021թ.-ին ուժը կորցրած է ճանաչվել «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման» մասին օրենքը և 16.05.2021թ .-ին ուժի մեջ է մտել նոր օրենքը, որտեղ հանվել են սեռափոխության մասին նախկին օրենքում գործող կարգավորումները, մասնավորապես, նախկին օրենքում 70-րդ հոդվածը սահմանում էր, որ Քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու մասին ՔԿԱԳ մարմնի եզրակացությունը կազմվում է մասնավորապես հետևյալ դեպքերում, երբ `

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական կազմակերպությունը տվել է սեռի փոփոխության մասին սահմանված ձևի փաստաթուղթ:
Այսինքն, եթե անձը ցանկանում է փոփոխություն կատարել քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ (սեռի մասին գրառման փոփոխություն), նա պետք է՝

Իրականացնի սեռափոխություն:
Ներկայացնի ՀՀ օրենսդրության սահմանված կարգով բժշկական կազմակերպության կողմից տրված սեռի փոփոխության մասին փաստաթուղթ:
Ներկայումս գործում է միայն արդարադատության նախարարի 13.05.2020 թ. թիվ 170-Ն հրամանը, որտեղ նշված է, որ օրենքի 70-րդ հոդվածով սահմանված՝ Քաղաքացիական կացության ակտերի գրառումներում փոփոխություն կատարելու մասին եզրակացությունը ՔԿԱԳ մարմինը կազմում է, եթե անձը, ում նկատմամբ կազմվել է քաղաքացիական կացության ակտը, կատարել է սեռի փոփոխություն: Այսինքն, սույն նորմը հղում է տալիս նախկին գործող օրենքին:

Այսպիսով, ներկա օրենքի կարգավորումները որևէ դրույթ չեն պարունակում սեռափոխության դեպքում ՔԿԱԳ ակտերում փոփոխություն կատարելու պայմանների վերաբերյալ:

Որոշակի առումով ներկայում գործող օրենքով (մեր կարծիքով) կարգավորումը նախատեսվում է 66-րդ հոդվածի 3-րդ մասով, ըստ որի՝ Քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ փոփոխություն կատարելու հիմքերն են՝

այլ քաղաքացիական կացության ակտային գրանցման կամ իրավասու այլ մարմնի ընդունած (տրամադրած) փաստաթղթի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու նաև կազմված քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ:
Այսպիսով, «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման» մասին նոր օրենքի ընդունմամբ սեռափոխության դեպքում քաղաքացիական կացության ակտում փոփոխություն կատարելու պահանջները հստակ չեն, սահմանված չեն անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու կարգավորումները:

Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ի ռազմավարական ուղղություններից է կարգավորել գենդերի իրավական ճանաչման գործընթացը ՀՀ-ում և սույնի հետ կապված մի շարք աշխատանքներ են տարվում:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՇԱՐՔ ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ն, շարունակելով բարձրացնել սեքս աշխատողների իրազեկվածության մակարդակը իրենց իրավունքների վերաբերյալ, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին կրթատեղեկատվական միջոցառումների շարք էր կազմակերպել:

Նոյեմբերին իրականացավ անվտանգության և պաշտպանվածության, ֆիզիկական և հոգեկան առողջության, ՄԻԱՎ / ՁԻԱՀ-ի կանխարգելման և թվային անվտանգության վերաբերյալ թվով չորս միջոցառում:

Միջոցառումների ընթացքում կազմակերպության աութրիչ աշխատակիցները, մշտապես կապի մեջ լինելով սեքս աշխատող համայնքի անդամների հետ, նրանց շրջանում պարբերաբար իրականացրել են ՄԻԱՎ-ի հետազոտություն, տրամադրել են պահպանակներ և լուբրիգելներ, իրազեկել են սեռական առողջության պահպանման վերաբերյալ և ուղղորդել են համապատասխան բժշկական զննումների:

Սեքս աշխատող անձինք, հանդիպելով կազմակերպության իրավաբանի հետ, ձեռք են բերել իրենց իրավունքների պաշտպանության վերաբերյալ մանրակրկիտ տեղեկատվություն, որը կօգնի նրանց լինել պաշտպանված ոստիկանությունում, փողոցում սեքս աշխատանք կատարելիս և այլուր:

Միջոցառումների ընթացքում մասնակիցները ձեռք են բերել թվային անվտանգության վերաբերյալ գիտելիքներ և սովորել են պաշտպանված լինել սոցիալական տարբեր հարթակներում: Սեքս աշխատողներից շատերը սեքս աշխատանքով են զբաղվում հենց օնլայն հարթակում, ուստի, համայնքի անդամները կարևորում են նշյալ միջոցառումների շարունակական լինելը՝ իրենց իսկ անվտանգության խթանման համար:

Դեկտեմբերին սեքս աշխատողները մասնակցել են թվով երեք միջոցառումների, որոնք կազմակերպվել էին Իրավունքի կողմ ԻՀԿ-ի համայնքային կենտրոնում: Միջոցառումներն իրականացվել են թրաֆիքինգի, արտագաղթի, ընտանեկան բռնության կանխարգելման և սոցիալական աջակցության կարևորության թեմաներով:

Հանդիպումներն անհրաժեշտություն էին սեքս աշխատողների համար և լայն քննարկման առարկա դարձան, քանի որ ՀՀ-ում սեքս աշխատողները զուրկ են տարրական կենցաղային պայմաններից, չունեն գոյատևման միջոցներ, շատ հաճախ անգամ ստիպված են լինում բռնության զոհ դառնալ իրենց իսկ ընտանիքներում, քանի որ ֆինանսական միջոցներ չունեն առանձին ապրելու համար. «ամեն ինչ ավելի է սրվել ՔՈՎԻԴ-19-ի ժամանակահատվածում, ես նույնիսկ օրվա ծախսերը չեմ կարողանում հոգալ» – նշեց մասնակիցներից մեկը:

Սեքս աշխատող անձանց համար մինչև այժմ գործում են վարչական տուգանքներ՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, իսկ եթե նույն գործողությունները կատարվել են վարչական տույժ նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում են տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի չափով: Եվ քանի որ ՀՀ-ում սեքս աշխատանքով զբաղվելն օրինական չէ, շատ սեքս աշխատողներ գնում են արտերկիր աշխատելու և հաճախ չեն վերադառնում:

Պետք է նշենք նաև, որ սեքս աշխատողները պարբերաբար տարբեր երկրներում աշխատելու գրավիչ առաջարկներ են ստանում, իրազեկվածության պակասի պատճառով խաբվում են և միգրացիայի ճանապարհին չարաշահման, շահագործման և թրաֆիքինգի զոհ են դառնում: Հանդիպումների ընթացքում մասնակիցները տեղեկացան թրաֆիքինգի երեք հիմնական տարրերի (գործողություն, միջոց, նպատակ), թրաֆիքինգի պատճառների և հետևանքների վերաբերյալ, գործնական խորհուրդների միջոցով իրազեկվեցին թրաֆիքինգի զոհ դառնալուց խուսափելու միջոցների մասին:

Նմանատիպ հանդիպումները կրելու են շարունակական բնույթ, որպեսզի ՀՀ-ում բնակվող յուրաքանչյուր սեքս աշխատողի խնդիր փաստագրվի, բարձրաձայնվի և լուծում ստանա:

Նշենք, որ սույն հանդիպումների շարքն իրականացվում է «Կարմիր հովանոց» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

ՏՐԱՆՍ ՃԱՄԲԱՐ 8

Սույն թվականի դեկտեմբերի քսանից քսաներեքն ընկած հատվածում իրականացավ Տրանս ճամբար ուրը, որը համախմբել էր Երևանում և ՀՀ տարբեր մարզերում բնակվող ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ ակտիվիստներին:

Դասընթացի նպատակն էր խթանել ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ անձանց կարողությունների զարգացումը և հզորացումը, բարելավել համայնքի ներգրավվածության մակարդակը սոցիալ-մշակութային և քաղաքացիական միջավայրում, խթանել նրանց անվտանգությունը ինչպես ընտանիքում, այնպես էլ հասարակությունում, նպաստել ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ անձանց իրազեկվածության մակարդակի բարձրացմանը՝ համայնքի ներկայացուցիչներին տալով նոր գիտելիքներ և հմտություններ, որոնք կբարելավեն նրանց բարեկեցիկ և անվտանգ կյանքը:

Ճամբարի պաշտոնական բացումը կատարեց կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը, ով շնորհավորեց բոլոր մասնակիցներին ընտրվելու կապակցությամբ, նշեց, որ այդ հնարավորությունը պետք է օգտագործել կրթվելու, ավելի ուժեղ դառնալու, ՀՀ-ում ակտիվիստական գործունեություն ծավալելու, առկա ռեսուրսները բացահատելու և համայնքի շահերի պաշտպանության մեջ ներգրավվելու համար, ապա հավելեց, որ տարիների ընթացքում ճամբարները շատ կարևոր դեր են ունեցել հարյուրավոր ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ անձանց, սեքս աշխատողների, նրանց ծնողների և համակիրների կրթության հարցում, որոնք էլ իրենց ստացած գիտելիքները օգտագործել և օգտագործում են իրենց շրջապատում խարանը և խտրականությունը նվազեցնելու համար:

Ճամբարի ընթացքում քննարկվեցին այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝

Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները:
Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց իրավիճակը ՀՀ-ում:
Ատելության հիմքով բռնություններ և ատելության կոչեր:
Տրանս ակտիվիզմի իրավիճակը ՀՀ-ում:
ՀՀ դատական համակարգի կառուցվածքը և դերը:
Դատարան հայցադիմում ներկայացնելու կարգը:
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դերը և նշանակությունը:

Մասնակիցները ձեռք բերեցին գիտելիքներ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, իրավունքների ոտնահարման դեպքերի կանխարգելման, ակտիվիզմի, շահերի պաշտպանության և քարոզարշավներ վարելու հմտությունների, հայցեր գրելու և ներկայացնելու, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշանակության և նախադեպային որոշումների վերաբերյալ:

Ճամբարի ավարտին Լիլիթ Մարտիրոսյանը հանդես եկավ փակման խոսքով, հանձնեց վկայականներ, բոլոր մասնակիցներին շնորհակալություն հայտնեց ակտիվ մասնակցության համար, ապա հավելեց, որ Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ն, լինելով առաջին Տրանս կազմակերպությունը ՀՀ-ում և Կովկասում, ջանք ու եռանդ չի խնայելու իրականացնել մի շարք օրենսդրական բարեփոխումներ ի շահ ՏՐԱՍ ԼԳԲԻՔ անձանց, որպեսզի համայնքի անդամներն ապրեն անվտանգ և բարեկեցիկ կյանքով:

«Տարիներն ապացուցել են, որ ՏՐԱՆՍ ճամբարները պետք է կրեն շարունակական բնույթ, ամեն անգամ նոր տեղեկատվություն եմ տանում ինձ հետ ու օգտագործում իմ կյանքն ավելի լավը դարձնելու համար, շնորհակալ եմ կազմակերպությանը ինձ և բոլորիս տրված հնարավորությունների համար»:

Տրանսգենդեր կին

«Արդեն բոլորիս համար սպասված են դարձել ՏՐԱՆՍ ճամբարները, անհամբեր սպասում ենք հայտերին, որպեսզի լրացնենք, մասնակցենք, դրանք մեզ տալիս են նոր գիտելիքներ, ճամբարների ժամանակ ճանաչում ենք միմյանց, փոխանակում մեր փորձը և գիտելիքները, շնորհակալ եմ ինձ կրկին հնարավորություն տալու համար»:

Տրանսգենդեր տղամարդ

«Այսքան նոր գիտելիքներ, տեղեկատվություն չէի ստացել ո՛չ դպրոցում, ո՛չ էլ համալսարանում, սա ինձ համար նոր գիտելիքների շտեմարան էր, շնորհակալ եմ բոլոր կազմակերպիչներին, ովքեր այս ամենն անում են մեզ բոլորիս հզորացնելու համար»:

Տրանսգենդեր կին, ակտիվիստ

«Թեմաներն ընտրված էր ճիշտ և թիրախային, դատական համակարգի մասին գրեթե բան չգիտեի, սովորեցի ինչպես ճիշտ դատական հայցեր կազմել: Տեղեկացա մի շարք իրավունքների մասին, որոնք ինձ կօգնեն ավելի պաշտպանված լինել տարբեր հաստատություններում, շնորհակալ եմ:

Ոչ բինար անձ

ԻՐԱԿԱՆԱՑԱՎ ԼԳԲՏԻՔ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԵՌՕՐՅԱ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ն, առաջնորդվելով իր ռազմավարական նպատակներով, բացման օրվանից կարևորել է ԼԳԲՏԻՔ անձանց ծնողների հետ աշխատանքը, ուստի ամեն տարի կազմակերպում է եռօրյա արտագնա հանդիպումներ ԼԳԲՏԻՔ անձանց և նրանց ծնողների համար:

Սույն թվականի հունվար ամսին ևս կայացավ հանդիպում, ԼԳԲՏԻՔ համայնքի ներկայացուցիչների և ծնողներ խմբի հետ, որոնք ժամանել էին Երևանից և ՀՀ տարբեր մարզերից:

Հանիպման թեմաներն էին.

Ընտանիքում ներդաշնակության ամրապնդում:
Ինչպե՞ս ճիշտ աշխատել ԼԳԲՏԻՔ անձանց ծնողների հետ:
Ինչպե՞ս ծնողները ճիշտ աշխատեն ԼԳԲՏԻՔ ընտանիքի անդամների հետ:
Մարդու իրավունքներ:
Անվտանգություն:
Ծնողների հետ պանելային քննարկումներ:
Հանդիպման բացումը կատարեց կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը, շնորհակալություն հայտնեց ծնողների խմբին, ԼԳԲՏԻՔ անձանց, ովքեր ցանկություն էին հայտնել մասնակցել հանդիպանը, որը շատ կարևոր է համայնքի յուրաքանչյուր անդամի համար՝ կառուցելու ներդաշնակ ընտանիք:

Լիլիթ Մարտիրոսյանը կարևորեց նմանատիպ հանդիպումները, քանի որ նախորդ տարիների քրտնաջան աշխատանքները ԼԳԲՏԻՔ անձանց ծնողների հետ իրենց դրական ազդեցությունն են ունեցել համայնքի անդամների կյանքի վրա:

Եռօրյա սեմինարի ընթացքում մասնակիցները կատարեցին տարաբնույթ գործնական աշխատանքներ, որոնք ամբողջապես ուղղված էին ընտանիքներում ներդաշնակ և փոխհասկացված մթնոլորտ ստեղծելուն: ԼԳԲՏԻՔ անձինք ձեռք բերեցին հմտություններ, որոնց շնորհիվ նրանք կկարողանան իրենց ընտանիքներում լինել հասկացված և ընդունված: Մասնակիցները տեղեկացան, թե ինչպես ճիշտ աշխատեն այն ծնողների հետ, որոնք դեռ բավարար գիտելիքներ չունեն գենդերային ինքնության և սեռական կողմնորոշվածության վերաբերյալ, ինչպես ճիշտ աշխատեն ԼԳԲՏԻՔ ընտանիքի անդամների հետ: Նրանք նաև վեր հանեցին մի շարք խնդիրներ, որոնց բախվում են թե՛ ծնողները, և թե՛ ԼԳԲՏԻՔ ընտանիքի անդամները: Բացի այդ, առաջարկվեց մշակել գրքույկ, որը հետագայում կօգնի այն ծնողներին, որոնք բավարար տեղեկատվություն չունեն իրենց ԼԳԲՏԻՔ ընտանիքի անդամների հետ աշխատելու համար:

Ինչպես ամեն տարի, այս տարի նույնպես կազմակերպվեց «խոսում են ԼԳԲՏԻՔ անձանց ծնողները» պանելային քննարկումը, որի ընթացքում ծնողները խոսեցին իրենց անցած դժվարին ճանապարհի մասին, պատմեցին, թե ինչպես են ընդունել իրենց ԼԳԲՏԻՔ երեխաներին և ընտանիքի անդամներին: Քննարկման վերջում հարցերի միջոցով մասնակիցները ստացան իրենց հուզող պատասխանները:

Առաջին օրը շատ հուզիչ էր, տպավորիչ և գիտելիքներով հագեցած:

Դասընթացի հաջորդ օրերի ընթացքում ծնողները և ԼԳԲՏԻՔ անձինք տեղեկացան ՀՀ դատական համակարգի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դերի և նշանակության մասին:

Մասնակիցները դիտեցին տեղեկատվական հոլովակներ մարդու իրավունքների մասին, խոսեցին եվրոպական լավագույն փորձի մասին և քննարկեցին, թե ինչպես ստացած գիտելիքները կիրառեն տեղական մակարդակում:

Դասընթացի ավարտին բոլոր մասնակիցներին հանձնվեցին վկայականներ և շնորհակալագրեր:

Մեջբերումներ մասնակիցներից.

«Շատ ստացված հանդիպում էր, տեղեկատվությամբ, փորձի փոխանակմամբ լեցուն, շնորհակալ եմ այս հանդիպման համար, կարողացա բարձրաձայնել այն բոլոր դժվարությունների մասին, որոնց ես բախվել եմ, սակայն հաղթահարել եմ ու կանգնած եմ իմ երեխայի կողքին այսօր»:

ԼԳԲՏԻՔ անձի ծնող

«Կցանկանայի շատ ծնողներ լինեին այստեղ, լսեին իրենց երեխաներին, թե ինչ դժվարությունների միջով են անցնում՝ վախենալով բարձրաձայնել ընտանիքում իրենց սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության մասին: Կարծում եմ, որ կգա այն ժամանակը, երբ բոլոր ծնողներն էլ կհասկանան իրենց երեխաներին, նրանց կընդունեն այնպիսին, ինչպիսին կան, ու դա բոլորս պետք է անենք՝ մեր ստացած կրթության միջոցով»:

ԼԳԲՏԻՔ անձի ծնող

«Ես հուզված եմ, դժվարությամբ եմ ասում այն, ինչ պետք է ասեմ, ես այնքան եմ տպավորված այս հանդիպումից, որ ուզում եմ Երևան հասնելուն պես մայրիկիս ամբողջը պատմել, թե ով եմ ես, ինչ եմ զգում, ասել, որ իրեն շատ եմ սիրում ու չեմ ուզում կորցնել»:

ԼԳԲՏԻՔ անձ

«Շնորհակալ եմ անչափ այս կարևոր հանդիպման համար, խնդրում եմ, որ նմանատիպ հանդիպումներ շատ կազմակերպեք, դա մեզ շատ է պետք, ու ո՞վ գիտի, գուցե մեկ օր էլ մայրիկս այստեղ նստած լինի»:

ԼԳԲՏԻՔ անձ

Դասընթացը հնարավոր է դարձել «Աստրեան հանուն արդարության» լեսբիների հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

www.RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

facebook.com/RightSideNGO

twitter.com/RightSideNGO

instagram.com/RightSideNGO

+374 - 11 - 880 - 770

Copyright All Rights Reserved for Right Side NGO.